ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2025 թվականի N 251 - Ա

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին համապատասխանաբար 2020 թվականի դեկտեմբերի 29-ին «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքների իրականացման համար «Գրիգորյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված ՈՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 և 2024 թվականի հունիսի 5-ին «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինա բնակավայրի կրթահամալիրի» կառուցման աշխատանքների իրականացման համար «ԲՈՒԴԼԻԴԵՐ-17» և «ԱՊ ԳԼՈԲԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումի հետ կնքված ՈՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/53 գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով

հատկացված միջոցների շրջանակներում կնքել համաձայնագրեր՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ապահովումների փոխարինման և պատվիրատուին ներկայացման տասնհինգ աշխատանքային օրվա ժամկետի պահանջը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում «Գրիգորյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ԲՈՒԴԼԻԴԵՐ-17» և «ԱՊ ԳԼՈԲԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումի կողմից ապահովումները չներկայացվելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովել պայմանագրերի միակողմանիորեն լուծումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ